

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 27.05.2021թ. թիվ 2112790221 որոշումն անփոփոխ թողնելու, իսկ 27.05.2021թ. թիվ 2112790243 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու մասին

<< 18 >> 08 2021թ. 7-13 12479

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Էդգար Ավդալյանի ՄԴ/59328-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շերամի փողոցի 79 շենքի 24 բնակարանի բնակիչ Էդգար Ավդալյանը դիմումով խնդրել է վերանայել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112790221 և 2112790243 որոշումները նշելով, որ միևնույն իրավախախտման համար կրկնակի որոշում է ստացել, նշել է նաև, որ միևնույն իրավախախտման համար կրկնակի վճարված գումարը վերադարձնել:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմումատուի խնդրանքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի **251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները**:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման համաձայն **3.1՝ <<Մուտքն արգելվում է>>**

ճանապարհային նշանն արգելում է տրանսպորտային միջոցների մուտքը տվյալ ուղղությամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112790221 և 2112790243 որոշումների իրավախախտումների PIN անհատական ծածկագրերի տակ զետեղված տեսանյութերի դրվագային ուսումնասիրություններն ակնհայտ են դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 09.05.2021թ. ժամը՝ 18:06-ին Երևան քաղաքի Թամանյան-Իսահակյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ իրավախախտումն արձանագրված վայրում խախտել է **3.1՝ <<Մուտքն արգելվում է>> ճանապարհային նշանի պահանջը:**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 36-րդ մասի համաձայն՝ ճանապարհային նշանների պահանջները չկատարելու համար սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ իրավախախտումն անխուսափելիորեն կատարվել է երթևեկության այլ մասնակցի գործողության կամ անգործության պատճառով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի կարճումով որոշումը բեկանելն առաջ է բերում գանձված դրամական գումարների վերադարձ:

Այսպիսով, ակնհայտ է, որ միևնույն արարքի համար անձը երկու անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության թիվ 2112790221 և 2112790243 որոշումներով, ուստի ճանապարհային ոստիկանության կողմից կայացված վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112790243 որոշումը ենթակա է բեկանման, քանի որ այն տեխնիկական վրիպակի արդյունք է:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 27.05.2021թ. թիվ 2112790243 որոշումը բեկանելու և վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու:
2. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112790243 որոշումով նշանակված վարչական տուգանքի վճարված գումարը վերադարձնել դիմումատուին:
3. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 27.05.2021թ. թիվ 2112790221 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքը՝ դրան վերաբերող մասով, առանց բավարարման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
5. Սույն որոշման օրինակն ուղարկել Էդգար Ավդալյանին և ՃՈ ֆինանսական բաժանմունք:



Ե. Կարապետյան